ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ և ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա

Մասնագիտություն/ուղղություն Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա

դասիչ 056802.01.6

Որակավորումը բակալավր

Ֆակուլտետ բնական գիտությունների

Ուսուցման ձև/կիսամյակ առկա 7-րդ կիսամյակ, 2 կրեդիտ

Հաստատված է ամբիոնի նիստում

(արձ. N1 28,08,23թ.)

Ամբիոնի վարիչ՝ Հ.Օհանյան

Հաստատված է բնական գիտությունների ֆակուլտետի

Գիտական խորհրդի նիստում

(արձ. N1 , 15.09. 2023թ.)

Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան՝ Հ. Գրիգորյան

Կազմող՝ Ա.Ստեփանյան

Վանաձոր 2023թ.

1. Պրակտիկայի նպատակը

«Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության արտադրական պրակտիկայի կազմակերպումը և անցկացումը նպատակ է հետապնդում

- Բացահայտել տնտեսվարման հանգուցային հիմնախնդիրների՝ անձնակազմի, ներդրումների, ֆինանսների կառավարման խնդիրները և արդի առանձնահատկությունները,
- ծանոթացնել հարկերի տարատեսակներին և ֆինանսական ծրագրի մշակման հիմունքներին,
- հանգամանորեն լուսաբանել հարկադրույքների չափման և հարկերի գանձման սկզբունքները, ինչպես նաև ֆինանսների կառավարման գործառույթների ու մեթոդների բովանդակությունը, կիրառման մեխանիզմները,
- ներկայացնել որոշումների ընդունման ու իրացման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվող հիմնական մոտեցումները,
- կարողանալ տիրապետել ֆինանսների արդյունավետ կառավարման և ապահովագրական պայմանագրերի կնքման մեխանիզմներին,
- ծանոթանալ կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերին, դրանց կառավարման առանձնահատկություններին և յուրաքանչյուրի հարկերի վճարման դրույքաչափերին
- օգնել ուսանողներին օգտվելու անհրաժեշտ տեղեկատվական բազայից,
- նպաստել արդի ժամանակաշրջանում կառավարման նոր մտածելակերպի պայմաններում ապագա գրագետ մասնագետների ձևավորմանը, որն անհրաժեշտ է արդյունավետ բիզնես-աշխատանքների կազմակերպման համար:

2. Պրակտիկայի խնդիրները

- Ուսանողներներին ծանոթացնել հարկերի և ֆինանսների կառավարման բնագավառում ստացած տեսական գիտելիքների պրակտիկայում արդյունավետ կիրառման հմտություններին,
- Մշակել պրակտիկ գիտելիքները տարբեր իրավիճակներում կիրառելու կարողություններ,
- ձևավորել ֆինանսների կառավարման տարբեր գործընթացներում անհրաժեշտ տեղեկատվության ստացման կարողություններ, որոնք հնարավորություն կտան ճիշտ կողմնորոշվել տնտեսական հարաբերություններում,

- կարողանալ ճիշտ պատկերացնել կազմակերպության (մասնավոր, պետական, խառը) ներքին ֆունկցիոնալ կառուցվածքը, հիերարխիան և ենթաբաժինները,
- գնահատել կազմակերպության ներքին և արտաքին միջավայրերի վրա ազդող գործոնների յուրահատկությունները և յուրացնել նրանց կառավարման մեխանիզմները,
- կարողանալ օպերատիվորեն արձագանքել արտաքին և ներքին մարտահրավերներին և կայացնել արդյունավետ և համարժեք որոշումներ կառավարման բնագավառում

3. Արտադրական պրակտիկայի անցկացման վայրերը

1. Վանաձորի համայնքապետարան
2. Լոռու մարզպետարան
3. Վանաձորի պետական համալսարան
4. ՀԷՑ «Դեբեդ» մասնաճյուղ
5. Ֆինանսավարկային կազմակերպություններ
6. Ապահովագրական ընկերություններ
7. Հարկային տեսչության վարչության թիվ 16 Լոռու բաժին

4. Պրակտիկայի ընթացակարգը

Արտադրական պրակտիկայի ընթացակարգի բովանդակությունը բխում է պրակտիկայի նպատակներից և խնդիրներից.

Պրակտիկան անց է կացվում 3 փուլով.

- **Ուսուցողական- ճանաչողական.**

Այցելություն համապատասխան հաստատություն, ծանոթություն կազմակերպության նոր մատիվ–իրավական, կադրային, նյութատեխնիկական, տեղեկատվական-մեթոդական ռեսուրսներին, ենթակառուցվածքների գործունեությանը, այլ կազմակերպությունների հետ նրանց փոխհամագործակցային մեթոդներին:

- **Գործնական- հետազոտական.**

Պրակտիկայի վայրի հաստատումից հետո ուսանողները ղեկավարի հսկողությամբ և օգնությամբ աշխատում են համապատասխան տեղերում: Պրակտիկանտները բաժանվում են փոքր խմբերի և առանձին ենթակառույցներում համապատասխան աշխատակցի հսկողությամբ իրականացնում են պրակտիկ գործունեություն, որից հետո պրակտիկանտը կատարում է ինքնուրույն անհատական աշխատանք՝ կիրառելով տարբեր մեթոդներ և տեխնոլոգիաներ:

Ավարտական

Այս փուլում իրականացվում է պրակտիկայի արդյունքների ամփոփում, պրակտիկայի օրագրերի լրացում, հաշվետվության կազմում:

5. Պրակտիկայի ղեկավարի պարտականությունները

1. Պրակտիկայի նախապատրաստական փուլում

- Մշակել թեմատիկ պլան
- Ուսանողների հետ անցկացնել նախապատրաստական, ճանաչողակ անբնույթի սեմինար.
- Հանդիպել համապատասխան կազմակերպության ղեկավարին,

2. Պրակտիկայի ընթացքում.

- Համապատասխանեցնել պրակտիկայի ծրագիրը կազմակերպության գործունեությանը
- Վերահսկել պրակտիկայի ընթացակարգը, ուսանողների հաճախումները.
- Պրակտիկայի ընթացքում ուսանողներին ցույց տալ մեթոդական ցուցումներ:

3. Պրակտիկայի ավարտից հետո.

- Ստուգել հաշվետվությունը,
- Կազմակերպել պաշտպանություն:

5. Պրակտիկանտի պարտականություններն ու իրավունքները

1. Պրակտիկայի նախապատրաստական փուլում.

- Պետք է մասնակցի նախապատրաստական, ճանաչողական բնույթի սեմինարի.
- Ստանա օրագիր կատարած աշխատանքները գրառելու համար

2. Պրակտիկայի ընթացքում.

- Կանոնավոր հաճախի պրակտիկային
- Ակտիվորեն մասնակցի պրակտիկայի ծրագրով նախատեսված հարցերի ուսումնասիրմանը և քննարկումներին
- Յուրաքնչյուր օր օրագրում նշի կատարված աշխատանքի մասին

3. Պրակտիկայի ավարտից հետո

- Ներկայացնի հաշվետվություն
- Ներկայացնի օրագիրը պատրաստի վիճակում:

6. Պրակտիկայի գնահատումը

Պրակտիկայի գնահատման բաղադրիչները և հատկացվող միավորները (գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի)

Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորը	Գնահատում
1. Հաճախելիություն	0-10	
2. Ուսումնասիրվող թեմաների իմացություն	0-10	
3. Մասնագիտական հմտությունների կարողություն Ա)Կատարած աշխատանքների վերլուծություն ✓ կառավարման տնտեսական մեթոդների կիրառում ✓ կառավարման վարչակազմակերպչական մեթոդների կիրառում ✓ կառավարման մաթեմատիկական մեթոդների և մոդելների կիրառում Բ) Մասնագիտական աշխատանք ✓ կառավարչական որոշումների ընդունում ✓ ռիսկերի հաշվառում և կառավարում ✓ քննարկումներ կոլեկտիվի հետ Գ)Ստեղծագործական աշխատանք ✓ օժանդակություն կառավարման նոր մեթոդների հարցում ✓ մասնակցություն նոր նյութերի ձեռք բերմանը ✓ առաջարկությունների ներկայացում ✓ ֆինանսական և ակտուարական ոլորտում տեսական գիտելիքների կիրառումը գործնականում	0-60 0-5 0-5 0-10 0-5 0-10 0-5 0-5 0-5 0-5 0-5	
Պաշտպանություն	0-20	
Ընդհանուր միավոր	100	

Պրակտիկայի հաճախումների հատկացվող միավորները ըստ ուսանողի մասնակցության աստիճանի

Մասնակցության աստիճանը%	Հատկացվող միավորը
96-100	10
91-95	8
86-90	6
81-85	4
76-80	2
0-75	0

Կոմպետենցիաներ

«Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության բակալավրի որակավորում ունեցող ուսանողը արտադրական պրակտիկայի արդյունքում՝ ձեռք կբերի 056802.01.6 «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» ԿԾ-ով սահմանված հետևյալ կոմպետենցիաները.

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,

ԳԿ3 Հենքային և ընդհանուր գիտելիքներ,

ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ

ԳԿ8 տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),

ԳԿ9 խնդիրների լուծում,

ԳԿ10 որոշումների ընդունում:

բ. Միջանձնային կոմպետենցիաներ (ՄՁԿ)

ՄՁԿ1 քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,

ՄՁԿ2թիմային աշխատանք

ՄՁԿ3Միջանձնային ունակություններ

գ. Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)

ՀԳԿ1գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,

ՀԳԿ4 նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն,

ՀԳԿ5 նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն,

ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,

ՀԳԿ9 նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն,

ՀԳԿ10 նախաձեռնողականություն և ձեռներեցություն:

դ. *Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)*

ԱԿ6 Ճիշտ յուրացնել կազմակերպության ֆինանսական գործունեության վրա ազդող գործոնների յուրահատկությունները:

ԱԿ7 Կարողանալ ընտրել վերլուծության անհրաժեշտ մեթոդը և կիրառել ֆինանսական և ակտուարարական գործընթացներում:

ԱԿ9 Կարողանա տիրապետել կոմունիկացիաների և որոշումների ընդունման իրացման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվող հիմնական մոտեցումներին:

ԱԿ11 Ունակ լինել վերլուծելու ֆինանսական գործունեության բնագավառում առաջացած խնդիրները և առաջարկելու համարժեք լուծումներ: